ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

19 դեկտեմբերի 2016 թվականի **թիվ 33** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետության ազգային հատվածի պատվիրատուի մասին» տիպային հիմնադրույթի վերաբերյալ

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 3-րդ հավելված) 27-րդ կետի իրագործման նպատակով եւ 30-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան

հանձնարարում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում սույն Հանձնարարականի հրապարակման օրվանից «Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետության ազգային հատվածի պատվիրատուի մասին» հիմնադրույթի նախապատրաստման ժամանակ առաջնորդվել տիպային հիմնադրույթով՝ հավելվածի համաձայն։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի դեկտեմբերի 19-ի
թիվ 33 հանձնարարականի

ՏԻՊԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետության ազգային հատվածի պատվիրատուի մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ազգային հատվածի (այսուհետ համապատասխանաբար՝ ինտեգրված համակարգ, ազգային հատված) պատվիրատուն *[Եվրասիական տնտեսական միության անդամ պետության անվանումը (այսուհետ՝ անդամ պետություն)]* սահմանվում է *[անդամ պետության ակտի տեսակի անվանումը]* «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Միության մասին պայմանագիր) 3-րդ հավելված) 31-րդ կետին համապատասխան:

2. Ազգային հատվածի պատվիրատուն ազգային հատվածի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման մասով իրականացնում է իրավունքներն ու կատարում պարտականությունները:

3. Իր գործունեության մեջ ազգային հատվածի պատվիրատուն առաջնորդվում է Միության մասին պայմանագրով, Եվրասիական տնտեսական

միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերով եւ ակտերով, *[անդամ պետության անվանումը]* օրենսդրությամբ, ինչպես նաեւ սույն Հիմնադրույթով։

4. Սույն Հիմնադրույթում օգտագործվող հասկացությունները կիրառվում են Միության մասին պայմանագրով, այդ թվում՝ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրությամբ (Միության մասին պայմանագրի 3-րդ հավելված), Միության մարմինների՝ ինտեգրված համակարգի ստեղծման եւ զարգացման հարցերը կարգավորող ակտերով սահմանված իմաստներով։

5. Ազգային հատվածի պատվիրատուն իր գործունեությունն իրականացնում է՝ փոխգործակցելով *[անդամ պետության անվանումը]* լիազորված մարմինների հետ, ինչպես նաեւ իր իրավասության սահմաններում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ (այսուհետ՝ Հանձնաժողով), որը համակարգում է ինտեգրված համակարգի ստեղծումը, գործունեության ապահովումը եւ զարգացումը, եւ Միության այլ անդամ պետությունների ազգային հատվածների պատվիրատուների հետ։

II. Ազգային հատվածի պատվիրատուի խնդիրները

6. Ազգային հատվածի պատվիրատուի հիմնական խնդիրներն են՝

ա) ազգային հատվածի ստեղծումը, գործունեության ապահովումը եւ զարգացումը, ազգային հատվածում մշակվող տեղեկատվության պաշտպանության ապահովումը՝ ինտեգրված համակարգի ստեղծման տեխնիկական հանձնարարարությանը, Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ ինտեգրված համակարգի ստեղծման, գործունության ապահովման եւ զարգացման պլաններին համապատասխան, ինչպես նաեւ՝ հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ ինտեգրված համակարգի զարգացման ռազմավարությունը.

բ) վստահության անդրսահմանային տարածքի զարգացումը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 105 որոշմամբ հաստատված՝ Վստահության անդրսահմանային տարածքի զարգացման ռազմավարությանը եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 73 որոշմամբ հաստատված՝ Միջպետական տեղեկատվական փոխգործակցության ժամանակ ծառայությունների եւ իրավաբանական ուժ ունեցող էլեկտրոնային փաստաթղթերի օգտագործման հայեցակարգին համապատասխան.

գ) Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկին համապատասխան՝ ազգային հատվածում ընդհանուր գործընթացների իրագործման աշխատանքների համակարգում։

III. Ազգային հատվածի պատվիրատուի գործառույթները

7. Ազգային հատվածի պատվիրատուն իր վրա դրված խնդիրների կատարման համար իրականացնում է հետեւյալ գործառույթները՝

ա) ինտեգրված համակարգի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման պլանների հիման վրա մշակում եւ Հանձնաժողովի հետ համաձայնեցնում է ազգային հատվածի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման պլանները, ինչպես նաեւ համակարգում է դրանց իրագործումը.

բ) ինտեգրված համակարգի ստեղծման տեխնիկական հանձնարարության հիման վրա մշակում է ազգային հատվածի ստեղծման մասնավոր տեխնիկական հանձնարարություն.

գ) ընդունում է նորմատիվ իրավական ակտեր, որոնք՝

կանոնակարգում են տեղեկատվական փոխգործակցությունը ազգային հատվածում (հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից սահմանվող՝ միջպետական տեղեկատվական փոխգործակցության կազմակերպման պահանջները).

անհրաժեշտ են Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների իրագործման ժամանակ տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի պահանջները ազգային հատվածում կատարելու համար.

դ) մասնակցում է Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկում փոփոխություններ կատարելու մասին *[անդամ պետության անվանումը]* լիազորված մարմինների առաջարկությունների համաձայնեցմանը.

ե) համակարգում է Միության շրջանակներում ընդհանուր գործընթացի իրագործմանը ներկայացվող պահանջների սահմանման եւ Միության շրջանակներում ընդհանուր գործընթացի տեխնոլոգիական նախագծման փուլերում Հանձնաժողովի կողմից մշակվող ակտերի նախագծերի ուսումնասիրումը *[անդամ պետության անվանումը]*.

զ) կազմակերպում է Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների իրագործմանը մասնակցող *[անդամ պետության անվանումը]* լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերի միացումը ազգային հատվածին.

է) ապահովում է ազգային հատվածի միացումը ինտեգրված համակարգի ինտեգրացիոն հարթակին.

ը) ապահովում է ազգային հատվածում մշակվող տեղեկատվության մշակումը.

թ) կազմակերպում է ազգային հատվածում տեղեկատվական փոխգործակցության թեստավորում Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների իրագործման ժամանակ եւ մասնակցում է տեղեկատվական փոխգործակցության միջպետական թեստավորման կազմակերպմանը Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների իրագործման ժամանակ.

ժ) Հանձնաժողով է ներկայացնում ազգային հատվածի ստեղծման, գործունեության ապահովման ու զարգացման եւ Միության շրջանակներում՝

ազգային հատվածում ընդհանուր գործընթացների իրագործման աշխատանքների ընթացքի մասին հաշվետվություններ։

8. Ազգային հատվածի պատվիրատուն համակարգում է՝

ա) ազգային հատվածի ինտեգրացիոն անցուղու օպերատորի գործունեությունը.

բ) *[անդամ պետության անվանումը]* վստահված երրորդ կողմի ծառայությունների օպերատորի գործունեությունը.

գ) էլեկտրոնային տեսքով տեղեկատվության փաստաթղթավորման ընդհանուր ենթակառուցվածքի *[անդամ պետության անվանումը]* պետական բաղադրիչի օպերատորի գործունեությունը։

9. Սույն Հիմնադրույթի 8-րդ կետում նշված օպերատորները եւ նրանց ներկայացվող պահանջները սահմանվում են *[անդամ պետության ակտի տեսակի անվանումը]*։

10. Ազգային հատվածի պատվիրատուն տեղեկացնում է Հանձնաժողովին սույն Հիմնադրույթի 8-րդ կետում նշված օպերատորների նշանակման մասին։

11. Ազգային հատվածի պատվիրատուն կազմակերպում է ազգային հատվածի տեխնիկական աջակցության ծառայության գործունեությունը։

12. Ազգային հատվածի պատվիրատուն Հանձնաժողով է ներկայացնում ազգային հատվածի տեխնիկական աջակցության ծառայության պատասխանատու անձանց ակտուալ կոնտակտային տեղեկատվությունը։

13. Ազգային հատվածի պատվիրատուն իրականացնում է Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների մասնակիցների ազգային ռեեստրի ձեւավորումն ու վարումը։ Նշված ազգային ռեեստրում ընդգրկված տեղեկությունները ներկայացվում են Հանձնաժողով՝ Միության շրջանակներում ընդհանուր գործընթացների մասնակիցների ընդհանուր ռեեստրի ձեւավորման համար։

IV. Ազգային հատվածի պատվիրատուի իրավունքները

14. Իր գործառույթների իրականացման նպատակով ազգային հատվածի պատվիրատուն իրավունք ունի՝

ա) անհրաժեշտ տեղեկատվություն հայցելու *[անդամ պետության անվանումը]* լիազորված մարմիններից՝ ազգային հատվածի պատվիրատուի իրավասությունների շրջանակում գտնվող հարցերի լուծման համար.

բ) գումարելու եւ անցկացնելու ազգային հատվածի պատվիրատուի իրավասությունների շրջանակում գտնվող հարցերով խորհրդակցություններ, այդ թվում՝ *[անդամ պետության անվանումը]* լիազորված մարմինների աշխատակիցների մասնակցությամբ.

գ) իր իրավասության շրջանակներում փոխգործակցելու Հանձնաժողովի եւ Միության այլ անդամ պետությունների ազգային հատվածների պատվիրատուների հետ։

15. Ազգային հատվածի ստեղծման, գործունեության ապահովման եւ զարգացման ժամանակ ազգային հատվածի պատվիրատուն իրավունք ունի օգտագործելու Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ծրագրային ապահովումը, որն ազգային հատվածի կազմում օգտագործման համար անհատույց հիմունքներով Հանձնաժողովի կողմից փոխանցվում է ազգային հատվածի պատվիրատուին՝ Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ծրագրային ապահովումը փոխանցելու եւ այն օգտագործելու կարգին համապատասխան, որը հաստատվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հունվարի 26-ի թիվ 10 որոշմամբ։

16. Միության շրջանակներում ընդհանուր գործընթացները ազգային հատվածում իրագործելու հարցերով՝ *[անդամ պետության անվանումը]* լիազորված մարմինների հետ փոխգործակցության օպտիմալացման նպատակով

ազգային հատվածի պատվիրատուն իրավունք ունի ստեղծելու նախագծային գրասենյակ։ Նախագծային գրասենյակի ստեղծման միջոցառումներն իրագործվում են ազգային հատվածի պատվիրատուի գործունեության համար նախատեսված միջոցների հաշվին։

Ծանոթագրություն. Առանց տառատեսակային առանձնացման տեքստը մշտական եւ անփոփոխ տեղեկատվություն է։ Շեղատառերով առանձնացված տեքստը փոփոխվող տեղեկատվություն է եւ փոխարինվում է համապատասխան տվյալներով։